ջանայ ու զէս եկեղեցիս եկ ընդ հարկիւ
անել ջանա մեր ազգի ու տակ ի մեղաց
տէր եղիցի մասն եւ բաժին ընդուն-
եսցի եւ ընդ արիոսն առցէ
գրեցաւ գիրս ի թվ...»։

Դժբախտաբար թուականը կը պակսի։ Սակայն Աւետարանը գրուած ըլլալով 1233ին, ուրեմն յիշատակարանը պէտք է գրուած ըլլայ 1233ին կամ անկէ վերջ առեն մը։

Թ Ի Ի 7

Արցախի Քոլատակ գիւղէն վեր Կոչիկ Անապատ, «Անտաշ քարով չինուած են երեք տաճարներ եւս, միջին տաճարի բեմին ժողովրդահայեաց Երեսին քանդակուած է»։

«...Հասանայ եւ Մամա խաթունին թոռն Գ հետ ի Ղանն գնացի յամի ... իմ ազգէն թափեցի զ...ատաստանաւ զհարկանին մեր... Խերխան, Մարծպան, Մամիկոն կամեցաք նորոգել զմեր գերեզմանատունս, եւ Էրիվան (զուցէ Խէրխան։ Յ. Ք.) ...եցի զՍուրբ Ստեփաննոս եւ նորոգեցի զայլ եկեղեցիքս եւ զարդարեցի Մխիթար եղբաւր իմոյ... Թ ես Մարտիրոս, ես Սեւադա տվի զԳրիգորնանց, զՄոլնդանանց, զԳելմարդանց ի սուրբ եկեղեցիս ...մն. ժ(10). աւր ժամ Բ(2) Հասանա զատկին, Բ(2) Մամա Խաթունին՝ Վարդավառին. Ա(1) Ռուզու... Բ(2) Խերխանին յայտնութեան... կատարին, որ հակառակի կամ զրկել ջանա զայս տեղիս ի Սուրբ Գէորգա, ոսոխն նորա Աստուած եղիցի... գրեցաւ ի թվ(ին) Հայոց ՉԺԴ (1265)»։

(«Արցախ», Մակար Եպս. Բարխուտարեանց։ Բագու, 1895, էջ 168–169)։

Թ Ի Ի 8

Շիքակոյի Համալսարանին Կարմիր Աւետարանը գրուած է 1233ին բոտ կտրուած եւ եղծուած յիշատակարանին, եւ գրուած է Վարդան եւ Գրիգոր քահանայ եղբայրներու համար։

Էջ 237ա.

«Անուամբն յա(ստուծո)յ ամենակալին։ Ես Հայրական երէցս գնեցի զս(ուր)բ աւետարանս, Սեւադայ որդոյ Վախտանկէ ի հալալ արդեանց իմոց. յիշատակ ինձ եւ որդոյն իմոյ մարդար ք(ա)հանայի եւ այլ ամենայն արեան ազգականացն իմ, ով որ կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր եւ ա(ստուա)ծ զձեզ յիշէ իւր միւս անգամ գալստեան ամէն»։

Թ Ի Ի 9

Սաղմոսավանքի Սիոն եկեղեցիի մուտքին վերեւը.

«Շնորհաւք բարերարին Աստուծոյ ես Վաչէ որդի Բրդին, որդո Վաչէի եւ Տաւրիսուշահի՝ գստեր Մարցպանա Մա(մի)կոնէից գնեցի զԵրերունս ի մեծ պարոնէն Շահնշահէ եւ ետու ի վանս Սաղմոսի եւ զկէսն իմ եղբաւրն Հասանա, որ չէն պահէ վանիցս համար. եւ յորժամ եհաս ինձ փոխիլ ի կենցաղոյս տարաժամ եւ կէս աւուրց՝ յանձնեցի զհոգիս [իմ եւ զզոյ-
ո հաւր եւ մաւր իմոյ եւ գնեցի յնչից իմոց։ ԺՌ(10,000) սալիտակի զԱղկունձ
յիւանէ յորդո Շահ-